

ԳԷՀՀՀ-ի «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում  
բաղադրիչ» (ՀԱԱՈԻԿԿ) ծրագիր

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱԳՐՈՒՆՏԱՌԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ և ՀՈՂԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ և  
ՆՈՐ ՀՈՂԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

(ՀՈՂԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆԱԼԻՑ  
ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԼԱՆԴՇԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ - ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ)

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը փնտրում է խորհրդատվական ընկերություն՝ հողերի վերականգնման տեխնիկական ծառայություններ մատուցողի նշանակման համար (ՀՎԾՄ)՝ լանդշաֆտների վերականգնման զեկույց կազմելու նպատակով, որը հիմք կհանդիսանա միջազգային ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում բաղադրիչ» (ՀԱԱՌԻԿԿ) գյուղական զարգացման ծրագրի շրջանակներում լանդշաֆտների վերականգնման միջամտությունների նպատակով ներդրումների իրականացման համար:

### Հակիրճ նկարագիր

Հայաստանը դեպի ծով ելք չունեցող հանրապետություն է Հարավային Կովկասում, որը սահմանակից է Թուրքիային, Իրանին, Վրաստանին և Ադրբեջանին: Պետության գլխավորապես լեռնային տարածքն ընդգրկում է 29 800 կմ<sup>2</sup> մակերես, որը վարչականորեն բաժանված է 11 մարզերի (այդ թվում՝ մայրաքաղաք Երևանը) և 915 համայնքների, որից 49-ը՝ քաղաքային, իսկ 866-ը՝ գյուղական: Երկրի տարածքի մոտ 40%-ը պիտանի չէ գյուղատնտեսության համար: Գյուղատնտեսության համար պիտանի տարածքները կազմում են 1.39 մլն հեկտար, որից 35%-ը գյուղատնտեսական վարելահողեր են և մեծապես կախված են ոռոգումից: Մնացածը խոտհարքներ, արոտավայրեր և բազմամյա տնկարկներ են:

2012-2025 թթ. Հայաստանի զարգացման ռազմավարության (ՀՁՌ) համապարփակ ծրագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատեց, որ գյուղատնտեսությունը և գյուղական տարածքների զարգացումը կարևոր դեր են խաղում տնտեսության բազմազանեցման, աշխատատեղերի ստեղծման և աղքատության կրճատման գործում: Ռազմավարությունն ուղղված է կայուն գյուղատնտեսական գործելակերպի հաստատմանը՝ հողերի պահպանման միջոցառումների խթանման, ջրի հավաքման և ոռոգման մեթոդների բարելավման, պարարտանյութերի և այլ ագրոքիմիկատների օգտագործման սահմանափակման և արոտավայրերի կառավարման բարելավման միջոցով: Ռազմավարության նպատակն է նաև կանխատեսել և մեղմել բնական աղետների հետևանքները, ինչպես նաև իրականացնել կլիմայի փոփոխության հետևանքների մեղմման միջոցառումներ:

Այս համատեքստում ԳԶՄՀ-ն ձեռնարկեց «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիրը» (ԵԳՖԱԾ)՝ աջակցելու ՀՀ կառավարությանը գյուղական տարածքներում համատարած աղքատության խնդրի լուծման գործում: Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական կարգավիճակն ընտրված գյուղական տարածքներում, որտեղ աղքատությունը տարածված է, վերականգնելով երրորդային ոռոգման ենթակառուցվածքներ, ստեղծելով եկամուտների աճի և զբաղվածության ապահովման կայուն հնարավորություններ՝ գյուղատնտեսական արտադրության համակարգերի և ապրանքային մշակաբույսերի արտադրության արժեշտային

օղակների միջև առաջընթաց ու հետընթաց կապերի հզորացման ճանապարհով: ԵԳՖԱԾ-ի իրականացումը կտևի 6 տարի՝ սկսած 2016 թվականից:

ԳԵՀՀՀ-ի «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» ծրագիրը (ՀԱԱՈւՀԿԿ) հիմնվում է ԵԳՖԱԾ-ի ելակետային ծրագրի վրա և լիովին միաձուլված է դրան՝ թիրախային հանդիսացող բարձրարժեք ագրոանտառային և բանջարաբուստանային մշակաբույսերի մշակության ոլորտում հողի և ջրի պահպանման միջոցների ինտեգրման, ինչպես նաև ծրագրի համայնքային տարածքներում հողերի դեգրադացման ու կլիմայական ռիսկերի նկատմամբ ագրո-էկոհամակարգերի և գյուղական բնակչության ճկունության վերականգնման նպատակով:

ՀԱԱՈւՀԿԿ ծրագրի ընդհանուր նպատակն է «բարձրացնել Հայաստանի ռիսկային տարածքներում բնակվող գյուղական համայնքների՝ կլիմայի փոփոխություններին դիմակայելու ճկունությունը», իսկ հատուկ նպատակը՝ «մեծացնել փոքրածավալ տնտեսություն վարող ֆերմերների եկամուտներն ու ակտիվները հողերի կայուն կառավարման համակարգերում և տեխնոլոգիաներում ներդրումների միջոցով»: ԳԵՀ/ՀԱԱՈւՀԿԿ ռազմավարությունը հիմնվում է հետևյալ բաղադրիչների վրա.

Բաղադրիչ 1. Ներդրումներ կայուն գյուղատնտեսական համակարգերում և տեխնոլոգիաներում: Բաղադրիչը հիմնականում կկիրառի կլիմայի փոփոխությունների նկատմամբ կայուն տեխնոլոգիաներ ելակետային ծրագրով վերականգնված երրորդային ոռոգման համակարգերում և կաջակցի մարզինալ համայնքային հողերի փոխարկմանը կլիմայական ռիսկերի նկատմամբ ճկուն ագրոանտառային տնկարկների, որոնք կառավարվում են արդյունավետ ոռոգման տեխնոլոգիաներով և հողի ու ջրի պահպանման ագրոնոմիական համակարգերով՝ գյուղատնտեսական արտադրանքի ոլորտում իրականացված ելակետային աշխատանքների կայունությունը բարելավու նպատակով: Ավելին, այս բաղադրիչը մասնավորապես ուղղված կլինի կանանց խմբերին և կաջակցի նրանց ստարտափ փաթեթներով, որոնք կօգնեն բազմազանեցնել ընտանեկան հողակտորներից ստացվող ապրուստի միջոցները և բարձրացնել պարենային ու սննդառության ապահովությունը:

Բաղադրիչ 2. Լանդշաֆտների վերականգնման միջոցով համայնքային հողերի դեգրադացման կանխարգելում: Ծրագիրը կկիրառի էկոհամակարգի վրա հիմնված լանդշաֆտային մոտեցում՝ հողերի դեգրադացման նկատմամբ խոցելի տեղանքների հայտնաբերման և ինտեգրված լանդշաֆտային վերականգնման միջոցառումներ իրականացնելու նպատակով՝ ոռոգման համակարգերի ֆունկցիոնալությունն ու երկարակեցությունը բարձրացնելու, հողատարումը և հողերի դեգրադացումը կանխելու, գետերի հունների, ջրհավաք ավազանների և լեռնալանջերի երկայնքով բուսածածկույթի բարելավման համար: Վերջնանպատակը բնապահպանական ծառայությունների վերականգնումն է, ինչը կնպաստի թիրախային գյուղական տարածքների զարգացմանը, ինչպես նաև վերականգնողական բազմակողմանի միջոցառումներից շրջակա միջավայրի, սոցիալական և տնտեսական օգուտների ապահովումը: Այս բաղադրիչը նաև կստեղծի եկամուտների բազմազանեցման հնարավորություններ վայրի արտադրանքի արտադրության, վերամշակման և մարքեթինգի

միջոցով, ինչպիսիք են մեղվապահության արդյունքում ստացված ապրանքները՝ աջակցելով վերականգնված համայնքային հողերն օգտագործող երիտասարդական միությունների ստեղծմանը և ամրապնդմանը:

Բաղադրիչ 3. Փոքր ֆերմերային տնտեսությունների կարողությունների բարձրացում հողերի դեգրադացման դեմ պայքարի նպաստավոր պայմանների ստեղծման միջոցով: Ծրագիրը բարենպաստ միջավայր կստեղծի փոքր տնտեսություն վարող ֆերմերների, որոշումներ կայացնողների և բոլոր համապատասխան դերակատարների կարողությունների բարձրացման համար՝ գյուղատնտեսական արտադրության և լանդշաֆտների վերականգնման ոլորտում ներդնելու արդյունավետ գործելակերպ, որը կօգնի մեղմել անապատացման և հողերի դեգրադացման խնդիրները: Ուսուցողական ծրագրեր կմշակվեն ու կիրականացվեն կանանց և երիտասարդների համար: Այս բաղադրիչը կգնահատի նաև առկա քաղաքականությունն ու կանոնակարգերը և ոլորտին առնչվող խնդիրները, որոնք կարող են նպաստել կամ կանխել կայուն գյուղատնտեսական համակարգերի և լանդշաֆտների վերականգնման միջոցառումների ընդունումը՝ հողերի դեգրադացման և կլիմայական ռիսկերը մեղմելու, ինչպես նաև քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ անելու նպատակով:

### **Առաջադրանքի նպատակը և խնդիրները**

**ՀՎԾՄ-ն** պետք է կազմի Հողերի վերականգնման հանգամանալից զեկույց: Զեկույցը պետք է լինի համակողմանի ուսումնասիրություն, որը կներառի՝

Ա. Հայաստանի Հանրապետության Սյունիքի և Արարատի մարզերի նախապես ընտրված տեղանքների համար կազմված վերականգնման և ներդրումների առկա 3 ծրագրերի վերանայում,

- Ընտրված տարածքներում վերականգնման միջոցառումների անհրաժեշտության հայտնաբերում և հաջորդիվ ընտրված տեղանքների հաստատում կամ վերանայում,

Բ. Վերականգնման հավակնորդ նոր տեղանքների հայտնաբերում, քարտեզագրում և ներդրումային պլանների մշակում, որոնցում առաջարկված կլինեն յուրաքանչյուր տեղանքում կատարվելիք ներդրումների տեսակները, ծավալաթերթերը, իրականացման ընթացքը և համայնքի ներգրավվածությունը,

Գ. Իրականացման աջակցություն:

### **Աշխատանքի շրջանակ**

ՀՎԾՄ-ն կաջակցի ԳԷՀ ՀԱԱՈւՀԿԿ-ի իրականացմանը՝ ներկայացնելով լանդշաֆտների վերականգնման հանգամանալից զեկույց/ուսումնասիրություն: Ուսումնասիրության առաջարկությունները պետք է համապատասխանեն ԳԷՀ-ի բաղադրիչի նպատակին և հաստատված փաստաթղթերին: ՀՎԾՄ-ն պետք է սերտորեն համագործակցի ԾԻԳ-ի ԳԷՀ համակարգողի հետ մոտեցումը վերանայելու և յուրաքանչյուր տեղանքում հողերի վերականգնման համար թույլատրելի գործողությունների ու տեսակների

ուսումնասիրման/սահմանման հարցում (օրինակ՝ արոտավայրային և անտառ-արոտավայրային հողերի վերականգնում, հակաէրոզիվ մեթոդներ): Ինչպես նշված է ԳԷՀ-ի նախագծային փաստաթղթում, ինչպես նաև ավելի շատ համայնքներ ու շահառուներ ընդգրկելու և ակնկալվող Գլոբալ էկոլոգիական օգուտները ստեղծելու նպատակով աշխատանքները պետք է իրականացվեն Հայաստանի տարածքում՝ «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրի» շրջանակում, ԳԷՀ-ի թույլատրելի տարածքներում՝ համայնքային հողերի այն տեղանքներում, որոնց վերաբերյալ հողային սեփականության իրավունքի հետ կապված որևէ խնդիրներ և վեճեր առկա չեն: Այս գործընթացում պետք է պահպանվեն Սոցիալական, շրջակա միջավայրի և կլիմայի գնահատման ընթացակարգերը (SECAP): Առաջադրանքի շրջանակը ներառում է հետևյալ 3 հիմնական խնդիրները.

### **Ա. Վերականգնման և ներդրումների պլանների վերանայում**

Ծառայություն մատուցողը կազմել է հողերի վերականգնման հաշվետվություններ 3 տարածքների համար (7 հա Սյունիքի մարզի Գորայք համայնքի Սպանդարյան բնակավայրում, 44.3 հա Տաթև համայնքի Հարժիս բնակավայրում և 10 հա Արարատի մարզի Նոր Ուղի համայնքում): Վերականգնման հաշվետվություններում ներկայացված են ընտրված տարածքների մանրամասն քարտեզագրումը, վերականգնման և ներդրումների պլանները: Սակայն, ԳԶՄՀ-ի վերջերս կայացած Ծրագրի Միջնաժամկետ Դիտարկման առաքելությունը նկատեց, որ փաստաթղթերում նկարագրված հողերի վերականգնման գործողությունների մոտեցումը (վերականգնման պլաններ և ծավալաթերթեր) տեղին չէ, մասամբ այն պատճառով, որ առաջարկվող գործողությունների մի մասը թույլատրելի չէ ԳԷՀ 6-ի շրջանակում (օրինակ՝ անօրգանական պարարտանյութի գնում և օգտագործում): Ավելին, ընտրված 3 տարածքներում առաջարկվող հողերի վերականգնման աշխատանքների գնահատված ընդհանուր արժեքը մեծապես կգերազանցի այս միջոցառումների նախնական բյուջեն և հետևաբար կնվազեցնի դրա ազդեցությունը՝ հասնելով ԳԷՀ-ի թիրախի 10%-ից պակաս ցուցանիշի, մինչդեռ ԳԷՀ-ի Ծրագրային հաստատված փաստաթղթում սահմանված է 880 հա: Այս համատեքստում ՀՎԾՄ-ն պետք է.

- Վերանայի վերականգնման առկա հաշվետվությունները, այդ թվում՝ առաջարկվող աշխատանքները, վերականգնման մեթոդները և ներդրումների արժեքը.
- Տրամադրի խորհրդատվություն (սահմանի)՝ արդյոք հնարավոր է սկզբնական 3 տեղանքների պահպանումը.
- Վերանայի վերականգնման հաշվետվությունները՝ ԳԷՀ 6-ի պահանջներին համապատասխան.
- Վերանայված վերականգնման պլանները համաձայնեցնի շահառու համայնքների հետ.
- ԾԻԳ-ին տրամադրի խորհրդատվություն վերանայված վերականգնման պլանների իրականացման միջոցառումների վերաբերյալ (այդ թվում՝ համայնքների հետ կնքված փոխըմբռնման հուշագրերի վերանայում, ԱՊ-ների և մրցութային փաթեթների կազմում՝ ծառայություններ մատուցող կազմակերպությունների, և տրամադրի ցանկացած օժանդակության, որի կարիքը ԾԻԳ-ը և ԳԷՀ-ի համակարգողը կարող են ունենալ՝ նշված հողատարածքներում վերականգնման միջոցառումների

իրականացումը սկսելու համար):

## **Բ. Վերականգնման հավակնորդ-թեկնածու տեղանքների հայտնաբերում**

ԳԷՀ ՀԱԱՈւՀԿԿ-ի՝ դեգրադացված հողերի վերականգնման թիրախային ցուցանիշը 880 հա է: Առ այսօր Ծրագրի շրջանակներում նախապես ընտվել է մոտ 60 հա: Ըստ ԳԷՀ-ի հաստատված փաստաթղթի՝ խոցելի տեղանքների ընտրությունը շարունակական գործընթաց է և պետք է իրականացվի պահանջի ու միջոցների առկայության դեպքում: Այս համատեքստում ՀՎԾՄ-ն պետք է՝

- Մշակի տեղանքի ընտրության չափանիշներ՝ համագործակցելով ԳԷՀ-ի համակարգողի հետ.
- Հիմնավորի ընտրության չափանիշները.
- Բացահայտի խոցելի տեղանքները և հողերի դեգրադացման արմատական պատճառները, նկարագրի ընտրված տեղանքների ելակետային վիճակը (բնական պայմանները).
- Ընտրի համայնքային հողերում ագրոանտառային մշակաբույսերի տնկման և/կամ վերականգնման համար հարմար տեղանքներ, որոնք նախկինում ծառայել են գյուղատնտեսական նպատակներով, որպես արոտավայր և/կամ վայրի խոտաբույսերի հավաքման համար, սակայն այլևս արտադրության համար պիտանի չեն (կամ ոչ պիտանի դառնալու սպառնալիքի տակ են) հստակ և ակնհայտ դեգրադացման խնդիրների պատճառով: Տեղանքների ընտրության գործընթացը պետք է հիմնված լինի փորձագետների կարծիքի և հողերի բնապահպանական, պատմական ու էկոլոգիական տվյալների վրա և հաշվի առնի այն տեղանքները, որտեղ հողերի քայքայման խնդիրները չեն գերազանցում այն շեմը, որը կկանխի ծառերի տնկումն ու մշակումը.
- Ընտրության չափանիշները պետք է հետևեն Հողերի կայուն կառավարման ծրագրին և ԲՊՄՄ-ի Վերականգնման հնարավորությունների գնահատման մեթոդաբանությանը (ROAM)՝ բնապահպանական՝ հողի և կլիմայի հատկությունների, հողերի պահպանման կարգավիճակի և կլիմայական ռիսկերի, մարդածին/մարդու միջամտության արդյունքում առաջացած բնապահպանական խնդիրների և սոցիալ-տնտեսական ենթատեքստին համապատասխան.
- Քարտեզագրի հայտնաբերված տեղանքները և տրամադրի ելակետային տեղեկություններ GIS քարտեզագրման համակարգի միջոցով, ինչպես նաև պատմական տվյալներ ընտրված տեղանքներում տարածված բուսատեսակների վերաբերյալ.
- Հայտնաբերված տեղանքները դասակարգի ըստ կատեգորիաների՝ հիմնվելով բուսատեսակների վերաբերյալ պատմական տվյալների, թեքության (ինչը կարող է ազդել վերականգնման արդյունավետության հավանական արագության վրա), հողօգտագործման տիպաբանության (արոտավայրեր, խոտաբույսերի հավաք, գյուղատնտեսություն, համակցված, խառը և այլն), հողի տիպի, կլիմայական պայմանների (տեղումների վերաբերյալ տվյալներ, բարձրություն և այլն) վրա.
- Ձեռք բերի Հայաստանում հողերի քայքայման վերաբերյալ տվյալներ երկրի տարածքում գործող տեղական կամ միջազգային կազմակերպություններից, այդ

թվում՝ Շրջակա միջավայրի նախարարությունից, Գիտությունների ազգային ակադեմիայից, այլ պետական կառույցներից, հասարակական և այլ կազմակերպություններից.

- Մշակի վերականգնման պլաններ՝ ներկայացնելով հիմնավորում հողերի վերականգնման առաջարկվող մոտեցման (մոտեցումների) վերաբերյալ՝ ըստ ընտրված տեղանքների կատեգորիաների, բացահայտելով հողերի քայքայման տեսակներն ու չափը, ցույց տալով պաշտպանության, կառավարման և վերականգնման ակտիվ միջամտությունների անհրաժեշտությունը, նշելով համայնքային հողերում լանդշաֆտների վերականգնման նորարարական տեխնոլոգիաները, ագրոառատային համակարգերը և գործելակերպերը, տրամադրելով ամփոփ տեղեկություններ բնապահպանական, ինստիտուցիոնալ, քաղաքականության/օրենսդրության և սոցիալ-տնտեսական հարցերի վերաբերյալ, այդ թվում՝

ա. ընտրված տեղանքներում տարածված բնիկ բուսատեսակների բարձրորակ սերմերի և սածիլների արտադրություն և/կամ ընտրություն՝ հիմնվելով պատմական տվյալների վրա.

բ. հողի արդյունավետ և/կամ նորարարական նախապատրաստման և ռեկուլտիվացիայի արդյունավետ/նորարարական մեթոդներ.

գ. տեղանքի պաշտպանության արդյունավետ մեթոդներ:

- Ամենանորարարական ագրոնոմիական համակարգերն ու տեխնոլոգիաները, ինչպիսիք են ռեսուրսախնա գյուղատնտեսությունը, օրգանական գյուղատնտեսությունը, վնասատուների դեմ ինտեգրված պայքարը և անասունների ու մշակաբույսերի ինտեգրված կառավարումը՝ հողի կառավարման և ջրի խնայողության գործելակերպի բարելավման, ինչպես նաև հողի վերականգնման համար (ինչը հնարավոր է նպաստի հողի բերրիությանը):

դ. Տեղանքներ, որտեղ ռեկուլտիվացիայի աշխատանքները ներառում են ծառատունկ և/կամ սահմանակից են բնական անտառներին, կենսաբազմազանության առումով կարևոր տարածքներին, կենսաբազմազանության թեժ կետերին և այլն: Չարգացման պլանի մշակում՝ սերտորեն համագործակցելով ՀՀ բնապահպանության նախարարության հետ:

- Մշակի ներդրումային պլան յուրաքանչյուր ընտրված տեղանքի կամ տեղանքի կատեգորիայի համար (օրինակ՝ սկզբնական ներդրումները, ժամկետը մինչև ներդրման ամորտիզացումը (հնարավորության դեպքում), մեկ հեկտարից ակնկալվող բերքատվությունը և լրիվ բերքատվության անցնելու ժամկետները, կառավարման և պահպանման կարիքները), վերամշակման պլան (օրինակ՝ արտադրությունը բազմազանեցնելու համար ակնկալվող ապրանքները) և մարքեթինգային պլան (օրինակ՝ ընտրված տեսակների/տրտերի շուկայի վերլուծություն (ապրանքային մշակաբույսեր լինելու դեպքում)՝ նշելով յուրաքանչյուր ապրանքատեսակի մեկ կգ-ից ակնկալվող հնարավոր օգուտները՝ հաշվի առնելով տեղական և ոչ տեղական շուկայական հնարավորությունները և այլն):

- Ներդրումային ծրագրերը պետք է արձանագրեն հողերի վերականգնման միջոցառումների ուղղակի և անուղղակի տնտեսական օգուտները

(ծախսարդյունավետության վերլուծություն) իրական օրինակների միջոցով, որոնք համապատասխանում են հայկական համատեքստին, ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի Փարիզի համաձայնագրին, ՄԱԿ-ի կենսաբանական բազմազանության կոնվենցիային, ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի մասին կոնվենցիային, Կայուն զարգացման նպատակներին և այլն:

#### **Գ. Իրականացման աջակցություն**

1. Կարիքների և վերականգնման միջոցառումների բացահայտման ընթացքում տեղական իշխանություններին և վերջնական շահառուներին տրամադրի կարողությունների ամրապնդման աջակցություն:
2. Սերտորեն համագործակցի ծրագրի աշխատակիցների, այլ ծառայություններ մատուցողների հետ (տեղական և միջազգային), գործընկերների, դոնոր կազմակերպությունների և շահագրգիռ կողմերի հետ՝ վերականգնման պլանների կատարումը հեշտացնելու նպատակով:
3. Անհրաժեշտության դեպքում ապահովի տեղեկատվական նյութերի կազմում ծրագրի աշխատանքների վերաբերյալ:
4. Աջակցի ՄԻԳ թիմին՝ սահմանելու ընտրված տեղանքների ելակետային վիճակը, ստեղծելու աշխարհագրական կոորդինատների վրա հիմնված բնութագրեր և առանցքային ներդրումների վերաբերյալ տվյալների բազաներ, որոնք կարիսիվացվեն ընդունված GIS ծրագրերի (ArcGIS կամ QGIS) միջոցով:

#### **Դ. Փորձագետներ (ընդհանուր առմամբ գնահատվում է 17 մարդ/ամիս, ներառյալ՝ բոլոր փորձագետների համար հատկացված բոլոր մարդ/ամիսները)**

Խորհրդատուն պետք է ներգրավի հետևյալ հիմնական փորձագետներին:

#### **Ա. Ծրագրի ղեկավար՝ հարակից ոլորտում ապացուցելի փորձով**

- Առնվազն 5 տարվա ընդհանուր մասնագիտական փորձ հարակից բնագավառում:
- Դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի կառավարման փորձ:
- Անգլերենի և հայերենի գերազանց իմացություն:
- Հաղորդակցման, համակարգման, առաջնորդության և խնդիրների լուծման գերազանց հմտություններ:
- Առնվազն բակալավրի աստիճան համապատասխան բնագավառում

#### **Բ. Հողի կառավարման մասնագետ**

- Առնվազն 3 տարվա ընդհանուր մասնագիտական փորձ հարակից բնագավառում, Հայաստանի գյուղական վայրերում աշխատանքի փորձը ցանկալի է:
- Հայերենի գերազանց և անգլերենի լավ իմացությունը կղիտվի որպես առավելություն:
- Առնվազն բակալավրի կամ բուհական համարժեք աստիճան համապատասխան բնագավառում:

#### **Գ. Բույսերի կենսաբանության/բուսաբանության մասնագետ**



- Առնվազն 3 տարվա ընդհանուր մասնագիտական փորձ հարակից բնագավառում, Հայաստանի գյուղական վայրերում աշխատանքի փորձը ցանկալի է.
- Հայերենի գերազանց և անգլերենի լավ իմացությունը կդիտվի որպես առավելություն.
- Առնվազն բակալավրի աստիճան համապատասխան բնագավառում:

### **Դ. Քարտեզագրման/GIS-ի մասնագետ**

- Առնվազն 3 տարվա մասնագիտական փորձ քարտեզագրման/GIS-ին առնչվող բնագավառում.
- Ներկայացնել նախորդ աշխատանքների նմուշները՝ առնվազն 2 աշխատանք.
- Հայերենի գերազանց և անգլերենի լավ իմացությունը կդիտվի որպես առավելություն.
- Առնվազն բակալավրի աստիճան համապատասխան բնագավառում:

Բացի այդ, ՀՎԾՄ-ն պետք է ներգրավի անհրաժեշտ որակավորմամբ և թվով կարճաժամկետ փորձագետների՝ ծրագրի հաջող իրականացումն ապահովելու համար:

### **Ժամկետներ**

ՀՎԾՄ-ի հետ կկնքվի պայմանագիր՝ 12 ամիս ժամկետով: Ծառայությունների արժեքը, վճարման եղանակը և ժամկետները պետք է նշվեն ԾԻԳ-ի և ՀՎԾՄ-ի միջև ստորագրվելիք պայմանագրում:

### **Հաշվետվությունների և ներկայացման ենթակա փաստաթղթերի տրամադրման ժամանակացույց**

ՀՎԾՄ-ն հաշվետու է ԳԷՀ-ի համակարգողին, որը պատասխանատու է սույն առաջադրանքի համակարգման և վերահսկման համար:

- ՀՎԾՄ-ն հաշվետու է ԳԷՀ համակարգողին՝ համաձայն հաստատված աշխատանքային պլանի՝ ըստ առաջադրանքի ժամանակահատվածում ընկած պահանջների:
- ՀՎԾՄ-ն իր առաջարկության շրջանակներում պետք է ներկայացնի առաջադրանքի իրականացման մեթոդաբանությունը և առաջարկվող ու ծրագրված աշխատանքների ժամանակացույցը՝ ուղենիշների սահմանման և ժամկետների պահպանման համար:
- Պարբերաբար ամսական հաշվետվությունների ներկայացում, ներառյալ՝
  - Վերանայման հաշվետվություն նախապես ընտրված 3 տեղանքների վերաբերյալ՝ աշխատանքների 1-ին ամսվա ընթացքում.
  - Տեղանքի ընտրության չափանիշներ՝ աշխատանքների 2-րդ ամսվա ընթացքում.
  - Տեղանքների (հավակնորդ տեղանքներ) ընտրության մասին հաշվետվություն՝ ռեկուլտիվացիայի/վերականգնման ենթակա առնվազն 100 հեկտար հողատարածքների վերաբերյալ՝ աշխատանքների 3-րդ ամսվա ընթացքում.
  - Առաջարկվող տեղանքներում կատարվելիք ներդրումների պլան՝ աշխատանքների 3-րդ ամսվա ընթացքում.
  - Աշխատանքների 4-րդ ամսից սկսած՝ մինչև 11-րդ ամիսը առնվազն 100 հա մակերեսով հավակնորդ տեղանքների, այդ թվում՝ ներդրումների համեմատական պլանի/հաշվետվությունների ներկայացում.
  - Հավակնորդ տեղանքների մնացած հեկտարների (100 հա-ից պակաս) վերաբերյալ հաշվետվություն մինչև ծրագրի 12-րդ ամիսը.
  - Վերջնական հաշվետվություն՝ մինչև աշխատանքների 12-րդ ամիսը:
- Հաշվետվությունները պետք է ներկայացվեն հայերեն և անգլերեն:

### **Հաճախորդի կողմից մատուցվող ծառայություններ**

Հաճախորդը առաջադրանքի հաջող իրականացման նպատակով ՀՎԾՄ-ին կտրամադրի բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները, նյութերը և միջոցները, այդ թվում՝

1. Բոլոր առկա քարտեզներն ու հետազոտությունները.
2. Առաջնահերթ տարածքների/շրջանների ցանկը.
3. Նախատեսվող աշխատանքների առաջնահերթությունը.
4. Ցանկացած լրացուցիչ (ներկայացման ենթակա) փաստաթուղթ և/կամ վերահսկողություն: